

ՀԱՅՈՒՆՅԱՅ ԱՆՎԱԿԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՐԱ ԲԱՆԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ա. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հայոց միջնադարյան մատենագրությունը իր գոյության վաղ դարերից ի վեր մեզ է ավանդել բազմաթիվ անվավեր պատմություններ, որոնցից շատերը չեն կորցրել իրենց գեղարվեստական հմայքն ու հետաքրքրությունը: Այս նյութերը հայտնի են ու տարածված, սակայն, որքան էլ բանասիրություն կողմից նկատվել ու արժեքավորվել են իբրև կարևոր գրական հուշարձաններ, այնուամենայնիվ իրենց ընդհանուր գրական-պատմական երևույթի ճիշտ ընկալման տեսակետից մինչև այժմ կարոտ են մնացել պատմատիպաբանական համակողմանի ուսումնասիրության:

Նշված պատմաառասպելական ստեղծագործություններից հետաքրքիր են մանավանդ կենաց փայտի հետ կապված գրույցները, որոնց թիվը անցնում է երկու տասնյակից¹:

«Պատմութիւն յաղագս սրբոյ խաչին... որ Հացունեաց կոչի» վերնագիրը կրող գրվածքը շատ հայտնի է ոչ միայն XII—XVIII դդ. ընդգրկող անհամար ձեռագիր վկայությունների, այլև բավական թվով հրատարակությունների շնորհիվ²: «Պատմութիւնը» իր ժողովրդական վիպականացման միջոցներով, ընդհանուր վիպական տարրերով ու բնագրային կենցաղավարման առանձնահատկություններով, ինչպես երևում է, կողմնորոշվում է դեպի գեղարվեստական խոսքի բանահյուսական տիպը: Իբրև այդպիսին, այս ստեղծագործության ավանդապատումնային բնույթի բանավոր սկզբնատիպը կարող էր առաջանալ համապատասխան վանական միջավայրում: Հացունյաց խաչի պատմության տիպի որոշման հարցում, սակայն, վճռական դեր են խաղում նույն սյուժեի բանավոր տարբերակները, որոնց գրառումները հայտնի են Սյունիքից և Կարինից և որոնց բանագիտական քննությունն էլ կփորձենք ներկայացնել սույն հոդվածում: Մինչ այդ, սակայն, ավելորդ չէ հիշեցնել, որ Հացունյաց խաչի պատմության բանավոր կամ ասացողական տարբերակները իրար հարաբերում են այնպես, ինչպես, ասենք, մեր էպոսի տարբեր պատումները:

Սյունյաց տարբերակի գոյությունը միանգամից լույս է սփռում այն հարցի վրա, թե ինչու Վասպուրականի տարածքում գտնվող Հացունյաց խաչի պատմության թե՛ միջավայրն ու հերոսները և թե՛ գաղափարախոսական ակնարկները մի տեսակ Սյունիքի դիրքերից են ընտրված և միայն վերջին հատվածում է, որ Հացունիքի (Արտազ գավառում) տեսանկյունը երևան է գալիս: Պարզվում է, ուրեմն, որ ավանդական այս պատմությունը իր ծագմամբ «սյունեցի է» և դրա վկայությունն էլ Սյունյաց ասացողական տարբերակն է: Այս տարբերակը առաջին անգամ 1858 թ. հիշատակում է Ս. Զալալյանը, որը իր ճանապարհորդության ընթացքում Վայոց ձորի Արկազան գյուղում եղած ժամանակ տեղացիներից լսում է որպես ավանդություն. «...գլխատառեղի

¹ Նման պատմությունների ոչ լրիվ ցանկը տե՛ս Վ. Հացունի. Չարլարանաց նշխարքների հայոց քով. «Բազմավեպ», 1933, էջ 401—410:

² Տե՛ս Մ. Զամչյան. Պատմութիւն հայոց. հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 532—533. Ղ. Ալիշան. Հայապատմ. Վենետիկ, 1901, էջ 221—222: «Արարատ», 1888, էջ 399—401: Պատմութիւն Շապուհ Բաղրատունու, էջմիածին, 1921: Պատմութիւն Անանուն Զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բաղրատունի), թարգմ., առաջաբանը և ծնթգր. Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի. Երևան, 1971 և այլն:

զայս կոչեն սուրբ խաչ բնակիչք տեղւոյս և ամանդութեամբ ասեն, թե ամփոփեալ կայ ի սմա մասն ինչ ի կենաց փայտէն, զոր էառ տիկինն Սիւնեաց ի Հերակլ կայսերէն Յունաց՝ ի տրիտուր իւրոց վաստակոց ցուցելոյ նմին կայսերս³։ Յավոր, Ս. Զալալյանը նույնութեամբ չի վերարտադրում իր լսածը, այլ իսկույն վկայակոչում է հայտնի Հացունյաց խաչի պատմութիւնը՝ մի տեսակ խառնելով լսածն ու կարդացածը, որոնց տարանջատումը գրեթե դառնում է անհնար։

Հետաքրքիր է, որ Քաջբերունին, երբ մոտ 20 տարի հետո գնում է Զալալյանի հետքերով, Արկազանում հակիրճ ավանդութիւնից զատ (այն, որ վանքի հիմքում դրված է սուրբ խաչի մասնիկը) այլ ընդարձակ պատմութիւն չի լսում⁴։

Եվ իրոք, ինչպես երևում է Զալալյանի պատմածի և Հացունյաց խաչի պատմութեան մանրամասների համընկնումներից, Զալալյանը հիմնականում վերապատմել է Հացունյաց պատմութիւնը մի քանի փոփոխութիւններով։ Այս փոփոխութիւնները, սակայն, ոչ թե հեղինակի հորինածն են, այլ Արկազանում լսած տեղական պատմութեան տարրերը, որոնց միջոցով հազիվ նըշմարվում են արդեն մոռացվող Սյունյաց տարբերակի առանձնահատկութիւնները։ Դրանց հիման վրա պետք է ենթադրել, որ Արկազանցիք պատմել են փոքրիկ մի ավանդութիւն, որը բացատրում էր միայն ուխտավայրի անունը, մոտավորապես այսպիսի տեսքով. Սյունիքի Մառի իշխանուհին⁵ հունաց կայսրին մեծ ծառայութիւններ է մատուցում, որի դիմաց կայսրը նրան շնորհում է խաչափայտից մի մասնիկ, որն իշխանուհին բերում դնում է Արկազանի սրբավայրի հիմքում։ Այդ պատճառով էլ վանքը կոչվում է Սուրբ խաչ։

Զալալյանը տեսնելով, որ սա հիշեցնում է Հացունյաց խաչի պատմութիւնը, նրա հիման վրա այս փոքրիկ ավանդութիւնը ավելի ընդարձակ է ներկայացրել։

Սա է, որ համարում ենք Սյունիքի ասացողական տարբերակ։ Այն թույլ է տալիս ենթադրել, որ մի ժամանակ ավանդութիւնը ընդարձակ պատմված պետք է լիներ եթե ոչ ամբողջ Սյունիքում, ապա գոնե վայոց ձորի շրջանում, հատկապես Արկազան գլուղում, որը հիշվում է դեռևս Մովսէս Կաղանկատվացու «Պատմութեան» մեջ որպես Ստեփանոս Սյունեցու աճյունի ժամանակավոր հանգստարան։ Սակայն երկար դարերի ընթացքում Արկազանի վանական միջավայրում ծնունդ առած այս ավանդութիւնը իր բանավոր ճանապարհ հին աստիճանաբար կրճատվելով հասել է մինչև XIX դար և գրառվել՝ մնալով իբրև Ս. խաչ վանքի սոսկ բացատրութիւն։ Դրա պատճառն այն է, որ Սյունյաց իշխանուհու ձեռք բերած խաչամասնիկի ավանդական պատմութիւնն իր գործառութեան շրջանում գրի չի առնվել ու չի մշակվել որպես վանքի սրբագործված պատմութեան վավերաթուղթ (անվավեր պատմութիւն)։ Ըստ երեւելի է, թե՛ Արկազանի վանքի և թե՛ Սյունիքի եկեղեցական թեմի համար ավանդութիւնը շուտով կորցրել է իր գործնական նշանակութիւնը և եթե անգամ ժամանակին գրառվել է, ապա այլևս չի ավանդվել ու գրավոր շրջանառութիւնից դուրս է ընկել։ Այս ամենը տեղի ունեցած կարող էր լինել այնքան վաղ, որ XIII դարում արդեն գտնվեր իր մոռացման շրջանում, որովհետև Ստեփանոս Օրբելյանը, որ լավատեղյակ էր բազմաթիվ տեղական վանական ավանդութիւնների, ծանոթ չէր այս պատմութեանը, կամ եթե ծանոթ էլ էր,

³ Ս. Զալալյան. Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. մասն Բ, Տփլիս, 1858, էջ 132—133։

⁴ Քաջբերունի. Ծանապարհորդական նկատողութիւնք. «Արարատ», 1889, էջ 165—183։

⁵ Սյունիքի տարբերակում Բյուրեղ տիկնոջ փոխարինած Մարիամը (—Մարի), ի դեպ, ավելի պատմականութեան պատրանք է թողնում շնորհիվ իշխան վասակ Գաբուրի կնոջ՝ Սյունյաց տիկին Մարիամ Բագրատունու, որը 871—874 թթ. կառուցել է տվել Սևանի վանքը (տե՛ս Զ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Գ, Երևան, 1946, էջ 251)։

ապա արժեք չէր տալիս, որովհետև այդ ժամանակաշրջանում խաչամասնիկի ձեռքբերման ներկա ավանդությունը իբրև Հացունյաց խաչի պատմություն վաղուց իր իրավունքների մեջ էր և ճանաչված ու հաստատված էր ազգային մատենագրության մեջ, որպես գրավոր շրջանառության նյութ:

Ինչպես արդեն նշվել է, Սյունյաց բանավոր ավանդության այս ուշ գրառումից բացի հենց Հացունյաց խաչի պատմության մեջ կան մի շարք զուտ ներբնագրային փաստարկներ հօգուտ այն ենթադրության, որ այդ գրական հուշարձանը իր ծագումով «պարտական է» Սյունիքին, հետևաբար և Զաւալյանի շնորհիվ մեզ հասած Սյունյաց աղճատված տարբերակը ավելի վաղ է կյանքի կոչվել, քան Հացունյաց խաչի բուն գրավոր պատմությունը, որի ամենահին գրչագիրը մեզ է հասել XI—XII դդ.: Ստեղծագործության բովանդակությունը առաջին հայացքից իսկ հուշում է, թե այդ պատմությունը Սյունիքում կարող էր ստեղծված լինել, և ահա թե ինչու: Նախ՝ չէ՞ որ Սյունյաց տիրուհին է հյուրընկալում Հերակլին, որն էլ ի հատուցումն այդ բանի, ցանկանում է Սյունյաց վիճակը «մասնավորել» խաչափայտի մասնիկով: Երկրորդ՝ չէ՞ որ սյունեցիների ջերմեռանդության շնորհիվ է հրաշք կատարվում ու Սյունիքի առիթով է հույների աչքում բարձրանում Գրիգոր Լուսավորչի վիճակի հեղինակությունը: Պարզապես խաչամասնիկը Սյունիք բերելու ճանապարհին ջորին կանգ է առնում Հացունիքում, որն էլ դառնում է խաչի մշտական «բնակության» վայր: Երրորդ՝ Հացունյաց խաչի պատմության վերջին՝ վանքի հիմնադրման հատվածը մի առանձին, ինքնուրույն մաս է կազմում և եթե անգամ չլիներ էլ, գրանից նախորդ մասը չէր տուժի, որովհետև միմյանց միջև սյուժեի ծավալման ներքին տրամաբանությունից բխող պատճառ-հետևանքային կապ չկա: Հացունյաց խաչի պատմության սյուժեն, այսպիսով, երկմասանի է: Առաջին մասը՝ Դյուրեղ տիկնոջ կողմից մասնիկի ձեռքբերումը, կարող էր լինել և ընկալվել իբրև առանձին սյուժե, որը կավարտվեր նրանով, որ մասնիկը կհասներ Սյունիք, ինչպես կա իրոք ավանդության Սյունյաց տարբերակի մեջ: Իսկ Հացունյաց տարբերակի գրառող-խմբագիրը երկրորդ մասը ավելացնելով, փաստորեն նոր պատմություն է ստեղծել, այն մեկընդմիջտ կապելով Վասպուրական աշխարհի Հացուն դաշտի հետ: Ընդ որում, այդ երկրորդ մասի հավելումն էլ շատ ընդունված վիպական հնարանի միջոցով է արվել (ջորու կանգառ), մի բան, որ նման դեպքերի նկարագրության համար խիստ հատկանշական էր և միջնադարյան ընթերցողի մոտ պատումի բնականության պատճառք էր ստեղծում: Զորրորդ՝ ինչպե՞ս է պատահել, որ Հացունյաց խաչի պատմության բոլոր օրինակներում նշվում է, որ խաչափայտից պոկվում է երկու մասնիկ և երկուսն էլ ներկայացվում են... մի ճակատագրով: Ըստ էության պետք է տեղեկություն տրվեր նաև երկրորդ մասնիկի մասին, այսպես ինչ իմաստ ունենա խաչափայտից երկու մաս պոկելը: Հավանաբար Հացունյաց խաչի պատմության ավելի վաղ մի գրառող-խմբագիր Սյունյաց տարբերակը Հացունիքի դիրքերից խմբագրելով՝ մեկը դարձրել է երկու, չժխտելով նաև Սյունիքի բաժինը, իսկ հաջորդ խմբագիրը Սյունիքի բաժինը հանել է, միաժամանակ մոռանալով երկուսը ևս դարձնել մեկ, որով և առաջանում է փոքրիկ հակասություն և գեղարվեստական սյուժետային ասքի թերության տպավորություն:

Իհարկե, այս ամենով հանդերձ Հացունյաց խաչի Սյունյաց տարբերակի առաջնայնության լավագույն ապացույցը էլի մնում է Արկազանի Ս. Խաչ վանքի ավանդության XIX դարի գրառումը, որովհետև առանց վերջինիս, վերոբերյալ 4 ներբնագրային փաստարկները այնքան խոսուն չէին լինի:

Այսպիսով, պետք է ենթադրել, որ Հացունյաց խաչի բուն ավանդությունը նախ ձևավորվել է Սյունիքի միջավայրում, որից անցել է Վասպուրական, որտեղ էլ գրի է առնվել ու ավանդվել իր գրավոր գոյության առաջին տարիներին: Ուրեմն և պատահական չէ, որ Հացունյաց խաչի պատմությունը տեղ գտներ Վասպուրականի ու նրա իշխանների մասին պատմող այնպիսի ժողովածուներում, ինչպիսիք է, ասենք, Անանուն Զրուցագրի պատմությունը:

Այժմ, երբ պարզ է, որ Հացունյաց խաչի պատմությունը իր առաջին մա-

սում (մինչև Բյուրեղի կողմից խաչամասնիկի ձեռքերումը) սյուժետային հիմնական մանրամասներով պահպանել է Սյունիքի ավանդությունը, կարելի է վստահությամբ ասել, որ այն Սյունյաց ավանդության խմբագրված գրառումն է։ Խաչամասնիկի ձեռքերումն Սյունյաց ավանդությունը համապատասխան միջավայրում կարող էր ձևավորվել և այդ վայրերում բանավոր գոյատևել IX—X դդ. և այնուհետև անցնել զուտ հիշողական պասսիվ գոյության (ընդհուպ մինչև նոր ժամանակները)՝ իր տեղը զիջելով Հացունյաց խաչի պատմությանը։

Այսպիսով, խաչամասնիկի ձեռքերումն սյուժեն ներկայանում է որպես Սյունիքի ասացողական մեկ տարբերակ, իսկ Հացունյաց խաչի պատմությունը բնագրային իր որակով պետք է համարել այդ սյուժեի երկրորդ ասացողական տարբերակ։ Սյունիքի պատումը նախ բանավոր փոխանցվել ու համարվել է Վասպուրականի ասացողական միջավայրում և գրավել, իսկ հետագայում հիմք է դարձել «Հացունյաց խաչի պատմության» համար։ Առաջին գրառումը, թեկուզև խմբագրված, այնուամենայնիվ, ավելի մոտ է կանգնած եղել բանահյուսականին, քան ներկա Հացունյաց խաչի պատմությունը, ուր նախորդի արմատական խմբագրական մշակումն է և ավելի մոտ է գիտականին։ Հետևաբար, քանի որ առաջին գրառում-մշակումը անմիջապես աղբյուր է ունեցել բանավոր ավանդությանը, ավելի ճիշտ է այն կոչել ասացողական տարբերակ, իսկ երկրորդ մշակումը, քանի որ անմիջապես աղբյուր է ունեցել արդեն առաջին գրառման բնագիրը, ճիշտ կլինի անվանել նախնական խմբագրություն։ Այս վերջինից են ծագել հետագա գրավոր ու գրչային տարբերակները, որոնց լիակատար դասակարգումը միայն թույլ կտա խոսել Հացունյաց խաչի պատմության թե՛ առաջին գրառման և թե՛ առաջին խմբագրության մոտավոր ժամանակների մասին։ Առայժմ ենթադրաբար կարելի է ասել, որ Սյունյաց պատումը, X դարի վերջերից բանավոր ճանապարհով անցնել է Վասպուրականի հարևան տարածքները, որտեղ դրա հիման վրա ձևավորված Հացունյաց բանավոր տարբերակը առաջին անգամ փոքր-ինչ միտումնավոր գրի է առնվել համապատասխան վանական միջավայրում XI դարի առաջին կեսին, իսկ վերջինիս արմատական խմբագրական մշակմամբ էլ XI դարի երկրորդ կեսին (վերջին քառորդին) ստեղծվել է մեզ հասած գրական հուշարձանը։

Երբորդը Կարնո բանավոր կամ ասացողական տարբերակն է։ Խաչամասնիկի ձեռքերումն ներկա սյուժեն Կարին է անցնել երկու ճանապարհով. բանավոր և գրավոր։ Գրավոր տարբերակի համար հաստատ, իսկ բանավոր տարբերակի համար ենթադրաբար կարելի է ասել, որ աղբյուրը Հացունյաց խաչի գրավոր պատմությունն է։ Հետևաբար Կարնո գրավոր տարբերակը իրենից ներկայացնում է մի ակնհայտ խմբագրություն, որը արվել է Հացունյաց խաչի պատմության բնագրի միտումնավոր փոփոխությամբ հանուն Կարնո խաչկավանի «մասնավորման» ու բարձրացման։ Հացունյաց խաչի պատմմի Կարնո խմբագրության ամենավաղ հիշատակությունը մենք գտնում ենք XCVII դարի հեղինակ Հակոբ Կարնեցու տեղագրության մեջ («Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թէոդուպոլիս»)՝⁶։ Բայց քանի որ Հակոբ Կարնեցու սույն գործի նըպատակը ընդհանրապես Կարնո տեղագրությունն էր, դժվար է մտածել, թե նա խաչկավանքի հատվածը գրելիս միաժամանակ ստեղծել է Հացունյաց խաչի պատմմի Կարնո խմբագրությունը։ Պետք է համարել, որ Հակոբ Կարնեցուց առաջ արդեն կար այդ խմբագրությունը, որն էլ ինքը տեղագրության մեջ օգտագործել է։ Անհայտ կարնեցի խմբագրի գլխավոր նպատակն այն է եղել, որ խաչափայտի մասունքներից մեկն էլ հասնի Կարնո գավառի խաչկավանք գյուղի համանուն վանքին։ Եվ երբ Բյուրեղ տիկինն ու իր մարդիկ խաչակիր պահարանի առջև օր ու գիշեր տեսած իրենց աղոթքը ավարտում են, «...գնացին թագաւորն ու հայրապետն, բացին և տեսին, զի հասեալ էր Գ մասն ընդ գա-

⁶ Մատոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 4542, Թ. 27ա—34բ («Թէ որպէս բերաւ խաչափայտը—Ա. Ս.) չաչխարհն Հայոց, և թէ վասն էր ասի խաչափայտ և խաչկավանք» հատվածը)։

րոշ չափ. և անկեալ ի վերայ արծաթոյ սկուտեղին»⁷: Հացունյաց երկու մասնիկը այստեղ դարձել է երեք՝ հօգուտ հաշկավանի:

Հարկ է նշել, որ հիշյալ խմբագրութեան աղբյուրը ոչ միայն Հացունյաց խաչի պատումի բնագիրն է, այլև Կարնո տեղական բանավոր ավանդութիւն: Կարնո խմբագիրը կամ Հակոբ Կարնեցի իրենց պատումը հարստացրել են Հացունյաց խաչի սյուսթի նոր շարունակութեամբ. Հերակլի երկու որդիներն ու Կ. Պոլսի հայրապետը խաչափայտը Երուսաղեմ տանելու համար անցնում են Կարինով, որի շրջակայքում Ս. Խաչը մի քանի հրաշագործութիւններ է կատարում (Ուխտաձորի միջադէպը, աղբյուրի բխումը խաչափայտի լեռան վրայ), որոնցով էլ բացատրվում են Կարնո մի քանի տեղանուններ, ապա հայրապետը տեսնելով տեղի աստվածաշնորհ գործութիւնը, որոշում է մեկընդմիջտ մընալ ու ծառայել հաշկավանքում:

Գրավոր ճանապարհով առաջացած կարինյան խմբագրական տարբերակը, որը մեղ է վկայել Հակոբ Կարնեցին, հետագայում իր հերթին առաջացրել է մի խմբագրական տարբերակ հաշկավանքի կոնդակում: Կոնդակը, որը նույնութեամբ մեջբերված է Հ. Քոսյանի «Բարձր Հայքում», կազմվել է 1794 թ. հաշկավանքի նորոգման համար հանգանակութիւն կազմակերպելու նպատակով: Այն սկսվում է տեղի վարդապետի օրհնաբանական ճառով՝ ուղղված բոլորին, որից հետո շարունակվում է ալսպես. «... Եւ ընդ օրհնութեան նամակիս (իմա՝ կոնդակիս—Ա. Ս.) յայտարարութիւն լիցի բարեպաշտօն հաւատացեալոցդ, զի հրամայէ սրբազան առաքեալն Պօղոս՝ ասելով, թէ ի պէտս սրբոց հաղորդեցարուք: Այսինքն սրբոց վանորէից պակասութիւնն հոգալ տրօք եւ ողորմութեամբ: Արդ՝ ի բազմաց աղքատացեալ վանորէից մինն է եւ այս սուրբ հաշկավանքս եւ թէ ո՞րպէս եւ կամ յորում ժամանակի շինեցաւ, ասասցուք համառօտիս»⁸: Այնուհետեւ Հացունյաց խաչի պատումի սյուսթն ներկայացնում է իբրեւ հաշկավանքի պատմութիւն, որի աղբյուրներից մեկը, ինչպէս նշեցինք, Հակոբ Կարնեցու տարբերակն է, իսկ մյուսը՝ տեղական բանահյուսական ավանդութիւն:

Այն հարցին, թե երբ և ինչ ճանապարհով է ձևավորվել Հացունյաց խաչի Կարնո ասացողական տարբերակը, կարելի է պատասխանել նույն կերպ, ինչ ասվեց «Հացունյաց խաչի պատմութեան» համար: Այսինքն, ինչպէս այս սյուսթն Սյունիքից անցել և նախ բանավոր վերածնակերպում է ստացել նոր Հացունյաց միջավայրում, այնպէս էլ այն Հացունյաց խաչի պատմութեան արդեն գրական հուշարձանից անցել և բանավոր վերածնակութիւն է ստացել Կարնո մի նոր տեղական ավանդութիւն, եթե իհարկեւ ընդունենք, որ Կարնո նշված բանավոր տարբերակի ու խմբագրութեան ակունքը նույն Հացունյաց խաչի պատմութեան գրավոր բնագիրն է: Այլպէս պետք է մտածել, որ Կարնո ասացողական տարբերակը եւ սնվել է նույն Սյունյաց աղբյուրից, մի բան, որ ավելի բիւ հավանական է թվում: Բայց դա էական չէ: Կարևորն այն է, որ Կարնո տեղական միջավայրում այս սյուսթն բանավոր պատմութիւն է դառնում ավելի շուտ, քան նրա գրավոր տարբերակը: Այդ բանի վկայութիւնն է այն, որ վերջինս, իբրեւ Հացունյաց խաչի պատմութեան նոր խմբագրութիւն, լրացուցիչ աղբյուր է ունեցել Կարինի հաշկավանքի տեղական ավանդութիւնը:

Հացունյաց խաչի սյուսթնի այս նոր ասացողական տարբերակը կարող էր լիովին ձևավորվել ու վերաշրջվել Կարնո միջավայրին այն ժամանակ, երբ Հացունյաց պատմութիւնը արդեն ձեռագրային տարածում ստացած, ուրեմն և, հնարավոր է, մի քանի անգամ արտագրված լինէր նաև Կարնո վանքերում: Այս-

7 Նույն տեղում, թ. 32բ:

8 Հ. Քոսյան. Բարձր Հայք. Դ. Բ. Վիեննա, 1926, էջ 52:

պիսով առնչվում ենք հայ միջնադարյան գրչության պրակտիկայում հանդիպող այնպիսի դեպքի, երբ տվյալ վայրում արտագրվող գրավոր հրկր հաճախ կարող է անարձագանք չանցնել և խոր հետք թողնել այդ գրչական օջախում, ներկա դեպքում՝ ծնունդ տալ վանքի մի ամբողջ ավանդական պատմության: Իսկ թե ինչու հատկապես խաչկավանքի հետ պիտի կապվեր այդ պատմությունը, դրան էլ նպաստել է Ս. Խաչ վանք, Խաչկավանք, Խաչկավանք անունը այն պարզ պատճառով, որ անունը, որպես կանոն, նախորդում է այն բացատրող, ստուգաբանող ավանդությանը: Եվ եթե հետևելու լինենք խաչի և այլ անուններով հայտնի բազմաթիվ վանքերի մասին ավանդական տեղեկություններին, նրանցից շատերը, եթե ոչ բոլորը, կունենան իրենց անունը արդարացնող ինչ-որ թեկուզ մի փոքրիկ ավանդապատում հիշատակություն: Հետո է, որ այդ ավանդության ու նրա կրող առարկայի տեղերը շրջվում են և տեղանունը ստանում է ավանդության պատմական հավաստիությունը վկայող փաստի արժեք: Հիշենք նաև միայն, որ ասվածը վերաբերում է սրբատեղիների անունների՝ քրիստոնեության բերած ավանդության: Իսկ խաչկավանքի դեպքում, իհարկե, պատկառ կարևոր չպիտի համարել նաև այն հանգամանքը, որ վանքը Կարինի շրջանի հնագույն կառույցներից է⁹:

Այսպիսով, եթե ընդունենք, որ Կարնո ասացողական տարբերակի աղբյուրը Հացունյաց խաչի գրավոր պատմությունն է, ապա այն բավարար չափով տարածվելուց հետո միայն կարող էր արմատներ գցել Կարինում բանավոր վերածնունդի մասին համար: Կարնո բանավոր տարբերակի ձևավորման ժամանակը, ուրեմն, պետք է որ ընկներ մոտավորապես XIII դարից այս կողմ: Ի տարբերություն Հացունյաց խաչի ասացողական տարբերակի, Կարնո տարբերակը նրանից ավելի երկար բանավոր ճանապարհ է անցել մինչև իր գրանցումը: Հետևաբար և ավելի շատ է հեռացել իր աղբյուրից, լինի դա Հացունյաց խաչի պատմության բնագիրը, թե Սյունիքի բանավոր պատմությունը: Քանի որ Հացունյաց ասացողական տարբերակը այդքան շատ չէր հասցրել ձևափոխվել մինչև իր գրանցումը, գա պատճառ է դարձել, որ Հացունյաց խաչի պատմության առաջին լիակատար խմբագրությունը լրիվ պահպաներ Սյունիքի հետքերը: Մինչդեռ Կարնո ժողովրդական բանավոր տարբերակում իսպառ ջնջված են ոչ միայն Սյունիքի, այլև նրա անմիջական աղբյուր Հացունիքի հետքերը:

Հացունյաց խաչի Կարնո ասացողական տարբերակի առաջին գրառումը մեզ է հասել դարձյալ Հակոբ Քոսյանի շնորհիվ: Երբ խաչկավանքի պատմությունը լուսաբանելու համար Հ. Քոսյանը փնտրում էր վանքի կոնդակը, նրան ցույց են տալիս մի տետր, որի մեջ դրված էր նաև խնդրո առարկա տարբերակը՝ «Պատմություն սրբոյ խաչկավանքի» վերնագրով: Պատմությունը նախորդող հիշատակարանից իմացվում է, որ խաչկավանքում մինչև տ. 14-րդ կոնդակը կորչում է և վանականներից մեկը գրում է սույն տարբերակը, իբրև թե «քաղեալն ի նոյն կոնդակէ»¹⁰: Բայց հետո, երբ Քոսյանը Կարին քաղաքի դիվանատանը գտնում է իսկական կոնդակը, պարզվում է, որ վերջինս և իբրև թե նրանից քաղվածը միմյանց նկատմամբ ունեն միայն բանավոր տարբերակային առնչություններ¹¹: Ենթադրությունը մեկն է. վերոհիշյալ ձեռագիր տետրի անանուն հեղինակը «վերարտադրել է» կոնդակի նյութը՝ աղբյուր ու-

9 Նույն տեղում, էջ 40—45:

10 Նույն տեղում, էջ 48:

11 Նույն տեղում, էջ 51:

նենալով տեղի վանական շրջանակներում եղած բանավոր պատումը: Հետե-
վաբար, որոշ առումով անգիտակցորեն, այդ տետրի հեղինակը միաժամանակ
հանդես է եկել որպես խաչամասնիկի ձեռքբերման ներկա սյուժեի Կարնո բա-
նավոր տարբերակի և՛ ասացող, և՛ գրառող: Գրառումը, որ կատարվել է
1873 թ. հունիսի 26-ին, ինչպես երևում է պատմության վերնագրային նշու-
մից, հասկանալի պատճառով ներկայացվում է Քոսյանի անունով¹²:

Այդ տարբերակի բովանդակության մասին պատկերացում կարելի է կաղ-
մել թեկուզ հենց այն փաստով, որ նրանում հետք ու հիշատակություն չի մը-
նացել Սյունյաց ու Հացունյաց միջավայրերից, ասես ի սկզբանե այն ստեղծ-
վել է միմիայն Կարինում: Բյուրեղ տիկնոջը փոխարինել է խաչավանքի
«վաթսուն դգալ զարնող նահապետական հարուստ տան» տիրուհին, ծպտյալ
հոռոմ նախարարին փոխարինել է ծպտյալ հայ զորապետը, չկա նույնիսկ
պոկված խաչամասնիկների քանակի հոգսը. մի մասնիկ է, որը խաչավանքի
համար է: Ավելացված են նոր սյուժետային հատվածներ. խաչափայտի գերե-
ղարձի ճանապարհին բանջարանոցի հանկարծակի վերականգնացման վի-
պական տարրը, խաչափայտի լեռան, Ծաղկավանքի, խաչելույս կամ Ս. Հա-
րություն մատուռի ավանդապատում ստուգաբանությունները: Վերջիններս
առկա են նաև Հացունյաց խաչի պատմության Կարնո խմբագրական տարբե-
րակում: խաչի հետ կապված այդքան տեղանունների կուտակումը մի վայրում
նպաստել է սյուժեի լրիվ տեղայնացմանը և Կարնո միջավայրին անխախտ
ձևավորման:

Հացունյաց խաչի Կարնո բանավոր տարբերակի գլխավոր շեղումը թե՛
բուն «Հացունյաց խաչի պատմությունից» և թե՛ նրա կարինյան խմբագրու-
թյուններից (Հակոբ Կարնեցի, կոնդակ) խաչափայտից պոկված մեկ մասնիկի
առկայությունն է, փոխանակ երկու-երեք մասնիկի: Այս պատճառով էլ դուրս
են մնացել մյուս մասնիկների տեղավորման սյուժետային հատվածները: Կար-
նո ասացողական տարբերակը համապատասխանության եզրեր ունի Սյունյաց
նախնական ասացողական տարբերակի հետ, որը բացատրվում է ոչ թե են-
թադրելի աղբյուրային առնչակցություններով, այլ նրանց ձևավորման ճանա-
պարհի նմանությամբ: Երկուսն էլ խաչամասնիկի ձեռքբերման նույն սյուժեն
ներկայացնում են իբրև սեփական պատմություն: Այսինքն, Հերակլի կողմից
ազատված խաչափայտը անցել է Սյունիքով (Կարինով), Սյունյաց (Կարնո)
տիկինը մի մասնիկ է ստացել և նրա վրա կառուցել Ս. խաչ վանքը (Ս. խաչկա-
վանքը):

Ստացվում է այնպես, որ Սյունիքում ստեղծվել է խաչամասնիկի ձեռք-
բերման սեփական պատմությունը, իսկ Հացունյաց և Կարնո տարբերակները
ստեղծվել են Սյունյաց պատմության հիման վրա, և դա տեղի է ունեցել տըվ-
յալ միջավայրում սյուժեի բանավոր, երկարաժամկետ կենցաղավարման ու ձևա-
փոխման հետևանքով:

Հացունյաց խաչի ասացողական տարբերակի մի գրառում-հիշատակու-
թյուն էլ պահպանվել է Վ. Շտրեկերի ճանապարհորդական գրքում: Դումլի-
դաղ (խաչափայտի լեռ) լեռան վրա գտնվող սառնաղբյուրի մասին գրելիս նա
հիշում է տեղական ժողովրդական մի ավանդություն, որը ներկա սյուժեի կա-
րինյան պատումի համառոտաբանությունն է¹³:

12 Այս տարբերակն ու նրա հայտնաբերման հանգամանքները տե՛ս նույն տեղում, էջ 47—
50:

13 В. Штреккер. Очерки Верхней Армении. Тифлис, 1873, с. 19—20. Մեջ
ենք բերում այդ հատվածի թարգմանությունը. «Եթե հավատանք հայկական ավանդությու-
ններին, ապա մեր հետազոտման առարկա նփրատի ակունքը բացվել է մեզ համար բուրբուլի
առնպանելի պարագաներում, Հունաց Հերակլ կայսեր ժամանակներում հույներին հաջողվում
է պարսիկներից ետ առնել տիրոջ կենսաբեր խաչը, բայց վերադարձի ճանապարհին նրանք

Գոյութիւն ունեն մի քանի կողմնակի հիշատակութիւններ, որոնց հիման վրա կարելի է ենթադրել, թե այս կամ այն իշխանական տարածքում ևս ձեռք են բերել Հերակլի ազատագրած խաչափայտի մասնիկը: Ուրեմն տվյալ վայրերում էլ պետք է ստեղծված լինեն խաչամասնիկի ձեռքբերման սյուժեի իրենց տարբերակները: Վարդան Արեւելցին, օրինակ, ունի մի հիշատակութիւն, թե զարդմանցիները ձեռք են բերում Հերակլի տված խաչամասնիկը (հայտնի չէ, թե Հերակլը ում է տվել), Գարդմանից էլ մի այդպիսի մասունք ստանում են ծանարները¹⁴: Ամենայն հավանականութեամբ թե՛ զարդմանցիները և թե՛ ծանարները ունեցել են խաչամասնիկների ձեռքբերման իրենց զրույցները:

Մի երրորդ ենթադրելի տարբերակի տեղիք է տալիս Հակոբ Կարնեցին: Նա Հացունյաց խաչի պատմութեան իր խմբագրած տարբերակի մեջ գրում է. թե կենաց փայտից պոկվում է երեք մասնիկ. առաջինը՝ Բյուրեղ տիկնոջը, վերջինը՝ Կարնո տիկնոջը. դա արդեն գիտենք: Իսկ երկրորդ մասնիկը. թագավորի որդիները հոր պատվերով խաչափայտը պետք է տանեն Երուսաղեմ, ճանապարհին «...եկեալ հասին ի ներքին գաւառն Բասենու, եւ լուաւ իշխանն, եւ ընդառաջ որդոց թագաւորին, ևս առաւել սրբոյ նշանին, և տարեալ հանգոյց զնոսա, և յետոյ բազում ընծայիւք խիւայեաց գնաւ, և յետոյ յոյժ թախծանօք և սիրով խնդրեաց մասն, որ հատեալ էր ի փայտէն, զոր լուաւ ի նոցուն, որ ընդ իւրեանցս ունէին զհրաշալի հատումն և որդիք թագաւորին բաշխեցին սիրով զմի մասն նորայ, եւ նա առեալ հաւատով եղ ի հիմունս եկեղեցւոյն և շինեալ վանք վայելուչ, հոյակապ և զմբեթայարկ, խայտախար քարիւ ի պահպանութիւն երկրին Բասենու, որ կայ մինչև ցայսօր, դեռևս Բաշխենց վանք կոչեն»¹⁵:

Ասել, թե Բասենի Բաշխենց կոչված վանքի մասունքի հիշատակութեան մեջ (այն էլ այնքան մանրամասն) երևում է Հակոբ Կարնեցու կամ նրա նախորդ խմբագրի հատուկ բարյացակամ վերաբերմունքը՝ կլինե՞ր անհիմն ու անիմաստ, եթե Բասենի այդ վանքը իսկապես շունենար նման ավանդութիւն: Հետևաբար, այստեղ ևս գործ ունենք Հացունյաց խաչի պատմութեան ենթադրելի բանավոր տարբերակներից մեկի հետ, որի հանգամանալից գրառումը, սակայն, չի եղել կամ մեզ չի հասել:

Հացունյաց խաչի սյուժեի նշված բանավոր կամ ասացողական տարբերակները նույն բնույթի ստեղծագործութիւններ են, որոնք գոյութեան նույն, հավասար իրավունքով, յուրաքանչյուրն իր «երկրում» ունեցել են նույն դերն ու նպատակը, ինչ «Հացունյաց խաչի պատմութիւնը»: Վերջինս, սակայն, եղել է այդ տարբերակներից այն «երջանիկը», որին հաջողվել է արժանանալ համազգային ճանաչման և ներկայանալ այսօր որպէս վաղ միջնադարյան արժեքավոր գրական հուշարձան:

Հանգամանքների բերումով ստիպված էին ինչ-որ տեղ թաքցնել այն, իսկ թաղում են Դավիթ-դադ լուսան վրա, որտեղից հետագայում հույները բարեհաջող հասցնում են Բյուզանդիայ: Այնտեղ, ճանապարհին Հերակլ կայսրը, ընդառաջելով մի հայ իշխանուհու թախանձանքին, որը հյուրընկալել էր իրեն Կարինում, նրան խաչափայտի մի մասնիկ է նվիրում, որը հետո տիկնոջ կողմից դրվում է իր կառուցած խաչկալանքի հիմքում: Իսկ այնտեղ, Դավիթ-դադի վրա, խաչը թաղված տեղից հանելու ժամանակ հանկարծ դուրս է բխում մեր տեսած աղբյուրը: Այդ բանի հետևանքով վերջինս մեծ հարգանքի է արժանանում ոչ միայն հայերի, այլև թուրքերի կողմից: Նրա ջրում լվացվելը հոգու և մարմնի ապաքինում է նշանակում: Իսկ ով ինչ-որ մեղքի տակ ծանրացած լողանում է նրա մեջ, իսկույն ևեթ տեղում մահանում է: Պետք է ենթադրել, թե այդ այնքան տարածված հավատալիքին ոչ պակաս նպաստել է նաև աղբյուրի ջրի ցածր ջերմաստիճանը:

¹⁴ Վ ար դ ա ն (Ա ր և ւ ց ի). Պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 135:

¹⁵ ՄՄ, ձեռ. № 4542, Թ. 32ա—բ:

«ПОВЕСТЬ ОБ АЦУНСКОМ КРЕСТЕ» И ЕЕ УСТНЫЕ ВАРИАНТЫ

А. С. СААКЯН

(Резюме)

В определении вопроса фольклорности произведений типа «Повести об Ацунском кресте» большое значение имеют устные варианты повести, бытовавшие в Сюнике и Карине, а возможно, и в других регионах, о чем сохранился ряд письменных свидетельств. В статье по имеющимся записям проанализированы эти варианты и их генетические связи. Предположительно восстанавливается история средневекового сюжета о приобретении частей креста: в IX—X вв. сюжет сформировался и распространился в вайоцзорской среде Сюника; в первой половине XI в. он стимулировал рождение предания об Ацунском монастыре, первая, еще фольклорная запись которого легла в основу дошедшего до нас письменного памятника «Повесть о святом кресте...», названном Ацуняц. Видимо, именно на этом фундаменте в XIV и последующем веках сформировалось и широко разошлось в устной передаче предание об основании Каринского монастыря Хачкаванк; одновременно с использованием двух вариантов была составлена каринская редакция повести. Сюникский устный вариант в записи С. Джалаляна относится к первой половине, а каринский текст, дошедший в свидетельствах В. Штреккера и А. Косяна, — ко второй половине XIX века. Варианты сюжета о приобретении частей креста являются произведениями монастырского фольклора, каждый из них на своей «родине» имел ту же цель и назначение, ту же определяющую роль, что и «Повесть об Ацунском кресте». Однако лишь последняя получила общенациональное признание и в письменной обработке стала ценным литературно-историографическим памятником средневековья.